ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

02.03.2012թ.
161-ի 9

ՀՀ էներգետիկայի եւ բնական
պաշարների նախարար
պարոն Արմեն Մովսիսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Մովսիսյան,

2012թ.-ի փետրվարի 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Որքա՞ն գումար է ծախսվել 2011թ.-ին ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության համար թղթի ձեռքբերման նպատակով:
2. ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության կողմից ի՞նչ ծավալի թուղթ է ծախսվել 2011թ.-ին:
3. Որքա՞ն գումար է նախատեսվել 2012թ.-ի բյուջեով ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով:

Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մինչ օրս պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան